



ՕՐԱԳԻՐ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

Ա. ՏԱՐԻ

1861

Կը հրատարակուի Ամսոյն 10ին 30ին եւ վերջին:  
Վեցամսեայ գինն է 60 դանեկան ԿԱՆՏՈՆԿ:  
Ուզողը կրնայ տարագրուիլ Պօլիս Զեմեքիի խանը վերի  
յարկը Թ. 4-5 Խմբագրի սենեակը եւ Մերմանը Մար-  
գարեան Արգոյ Յարութիւն աղցի գրատունը:  
Ստորագրութիւնը 1861 Յունուար 10ին կսկիւրի:

Առօրի լրգանին ամբողջ 12 քիւր ուզողը 30 դանեկան պի-  
տի վճարէ:  
Անհնական լանու մը համար ըլլալու ծանուցմանց հա-  
մաժտաբար սակարկութիւն կըլլայ:  
Ո եւ իցէ համակ եւ գրութիւնը Խմբագրին պիտի ուղ-  
ղուի:

10 ՓԵՏՐՈՒԱՐ

ԵՐԵՎԱՆ

ՇՐՋԱՆ

ԹԻՒ 16

## Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Կը ծանուցանեմք մեր Յարգոյ ընթերցողացը թէ Գրգլար աղասը  
խանի խմբագրութեան սենեակնիս փոխել հարկ ըլլալով մեզի հետ տեսու-  
թիւն ընելու բարեհաճող անձինքը կը հրաւիրեմք Օգոստոսի խանը վերի  
յարկը 4-5 թիւերուն մէջ տեղի սենեակը:

## Մ Ե Ղ Ո Ւ

ԿԱՄ

«Տարեգիրն ու մատով մըն ալ ուղղից ազգային  
կեանքին»:

Տես Մեղու թիւ 124 երես 1

Ե.

Ինչ սքանչելի, եւ ի՞նչ անախտութիւն ուրախու-  
թիւն մը կ'զգայ յօդուածնուն վերնագիրը տեսնող  
այն ճշմարիտ Ազգասէրը՝ երբ ասով իմանայ թէ՛ Աղ-  
գին սա նեղ եւ դժուակ կացութեանը մէջ, եւ այն  
ամենայն մարդկային օգնութիւններէ զուրկ եղած ա-  
ռեն՝ յանկարծ 1861 տարւոյն սկիզբները Հայոց —  
Ազգային կեանքին Տարեգիրն ու մատով մըն ալ ուղ-  
ղից — մը ելեր է . . .

Իսկ ընդ հակառակն ո՞րքան պիտի տրտմը յիշեալ  
Ազգասէրը՝ երբ իմանայ թէ այս բանը միայն ան-  
խոհեմ եւ ինքնահաւան բանականի մը բերնէն ելած  
ու գրչին ծայրովը դրոշմուած խօսք մըն է . . .  
Յերաւի Աղգին այժմեան վիճակը նկատուելով խօս-  
քին էականը դործնապէս զօրաւոր է եւ կարեւոր .

բայց այս խօսքը արտասանողին գործքերը անյար-  
մար, անցոր, ու միանգամայն վտանգաւոր: Խօսքը  
աղղու՝ գործը իրմէ հեռու: Խօսքը անգին, գործը  
հնչին: Խօսքը երանելի՝ գործը պախարակելի . . .  
Չայն Յակոբայ, ձեռք Եսաւայ . վերջապէս խօսքով  
վահան եւ վարդան. բայց գործով . . . (կը խնա-  
յենք իրեն հոս փոխարինարար այլ եւ այլ անուն  
ներ տալու):

Եւ սակայն ո՞վ է նայինք սա Արամեան Աղգին  
չորս տարուան տարեգիրն եւ ուղղից եղողը, որ  
այս խօսքը քիչ զարմանք չի պատճառեց մեզ, եւ  
մեզի հետ մէկտեղ հասարակութեան շատերուն . . .  
Ահա ամենուն ծանօթ եղող եւ յօդուածնուն սկիզբը  
դրուած բնականապէս հպարտ Մեղուն է, որ չորս  
տարիէ ՚ի վեր ազգին մէջ նետուելով, գահգահա-  
ներով ազգը կ'արթնցնէ . . . ու բովելի աղաղակ-  
ներով կը քմրեցնէ եղեր (Շատ աղէկ):

Ուստի՝ հեռեւաբար ըսել է որ յիշեալ Մե-  
ղուն երբ այսօր խօսքով — եւ Հայ ազգին չորս  
տարուան տարեգիրն ու ուղղիցն եւ — ըսած ու  
հրապարակաւ քարոզած ժամանակ՝ գործքով չորս  
տարիէ ՚ի վեր ցաւակցութեան արժանի Հայերը — հնա,  
հնա, հաներով այսպաներ, ծաղրեր, ու ծանակեր, եւ  
անոնցմով ինք զինք եւ իւր համախոհները միայն  
զուարճացնելու զբաղեր է. եւ այս կերպով ամբողջ  
Աղգը (չլիսեմք ինչ բանէ) արթնցնեմ ըսելինս՝ աղ-

գալնոց շատերուն զլխու ցաւ եւ մէկ մասին ալ զըզուանք պատճառներ է . . . :

Նոյնպէս (իր ըսածին նայելով) չորս տարուան միջոցին մէջ — քովջի, (որ ըսել է կախարդ) աղաղակներով իրաւոյն կերելի թէ Ազգին մէկ մասը քովջական արհեստներով թմրեցուցեր է, որով զինք եւ իւր գործքերը կուրօրէն պաշտպանելու մասին կողմնակիցներ ալ ունեցեր է . . . :

Ներքն մեզի այն ընթերցողք, եթէ իր ըսած այն կերպ խօսքերէն ասոնցմէ ուրիշ հետեւութիւն մը կ'ելլէ՞նէ թող յայտնեն մեզի հրապարակաւ :

Սակայն սա ալ ըսեմք թէ, կարելի է իրեն այս տգիտաբար ըսածները ուրիշ մտօք եղած ըլլայ, բայց եւ այնպէս չի կրնար ուրիշ մեկնութիւն մը վերցընել. քանի որ իր խօսքերն չորս տարուան գործքերովը կը պարզուին, ու անոնցմով մեր ցըցուցած կերպին ճիշդը կը հաստատուին :

Ուստի ըսածնիս ազայուցանելու նպատակաւ Մեղուն անխոհեմաբար — ես վերջին տարիներս Ազգային կեանքի տարեգրին ու մասով մ'ալ (քանիներորդ մասը ըլլայ չի յայտնէր) ուղղին եղած եմ — ըսելով յառաջ բերած ծանրագին խօսքը, եւ այլ ուրիշ թեթեւ սօլիկութեամբ ըսածները՝ իւր չորս տարուան թեթեւագին եւ անօգուտ ազգի գործերուն հետ համառօտաբար բաղդատել հարկ կըլլայ : Եւ այս ալ աւելի անոր համար որ՝ ինք ըստ սովորութեան Տարեգրիւն հաշուի նստած ատեն, իւր ընթերցողներն ալ իրեն հետ միատեղ՝ անցեալին մէջ ինչ որ գործեց 'ի հաշիւ արկանելու, եւ իւր շահն ու կորուստն իմանալու հրաւիրելէ յետոյ, հաշուի ժամանակ քիչմը ստալ ըրած հրաւերը զանց առնելով ինք առանձին հաշուետուարը առջին առած՝ — քող (Մեղուն) ինք պատմե ինչ որ տեսաւ Ազգին մէջ գործըված եւ ինչ որ ինք գործեց — ըսելով ուղածին պէս հաշուոյն չահաւոր կողմը իրեն տաշելով շատ մը տեսաւներու ու գործեցներու հաշուեցուցակ մը Ազգին բովանդակութեանը նուիրած ըլլալովը, մենք ալ քանի որ իր ընթերցողներէն է ինք, հարկ էր այն ատեն այս ցըցուցած հաշիւները մէյմը մեզի ներկայացնէր, որով մենք ալ իրեն հետ մէկտեղ ուշի ուշոյ նայելով եւեւը պակասը կարգի գնէինք . . . : Ահա այս բանը չընելուն, եւ ինքն իրեն ըրած հաշիւները իւր ամենաճիշդ, եւ այս հաշիւներուն մէջ ինք կերպիւ մը ձերմակերես ելածի պէս — ես չորս միլիոն հայու սիրելին . . . եւ մեկ քանի . . . ամօքումար, եւ . . . խաւարի մէջ գործող ամպարիչտներու ատելին եմ — ըսելով դուռնաբար պարծենալուն՝ զմեզ կրկին եւ կրկին անգամ ստիպեց որ այն վերէն 'ի վար ցըցուցած տեսաւներու ու գործեցներու, եւ այլ ուրիշ ինչորոց վրայ յօք ըրած հաշիւներուն մէջ որքան չաքաչար սխալիլը Մեղու եղբայրներնուս բարեկամաբար իմացնեմք :

որպէս զի անցեալին մէջ շոտայութեամբ եւ անխոհեմաբար ըրած չափաւանց ծախքերը (կրկրորդները) ներկայիւ չափաւորելով՝ այնուհետեւ ուղղապէս կարեւոր նորանոր ծառայել Ազգային անտեսութեան մէջ, այն մեկ քանի ատելիներն ալ իրեն սիրելի ընելով . . . :

Եւ արդ ուրեմն սխալք կարգաւ շարել Մեղուն, այն — Ազգային կեանքի Տարեգրոյն եւ մասով մը ալ ուղղիչ ին տարեգրիւն շորհաւորութեան առթիւը ըսած ծանր ու հպարտ խօսքերն ու թեթեւ եւ խօսքին անյարմար գործքերը . ու անոնցմով բաղդատեմք, ու նայինք որ երբ՝ Մեղուն չորս տարուան ընթացքին մէջ նպատակաւ մասնաւոր գործ մը չի տեսնելովը՝ ի՞նչ համարձակութեամբ կը յանդգնի հրապարակաւ այնպիսի բարձր պատուանուն մը ինքնագլուխ եւ առանց արդեամբ ստանալու . (այն որ միայն մեր նախնի քաջազանցներու՝ ու գործով անոնց հետեւող անհատներու վայել է) , եւ այն ալ ան միջոցին, երբ Հայ Ազգը օրի օր աւելի վատաբարանալու եւ օր մ'ալ աշխարհի ազգաց կարգէն բառնալու անկարգ, դառն եւ բշուատ վիճակին մէջ դանտած ատեն, որ եթէ այս ուղղիչ Մեղուն վաղ ժամանակով գննելու ելած չըլլայ եղեր՝ Հայ ազգը ապականութենէ ապականութիւն ցնցելու տըրտմադրութեան մէջ մնալով . . . : ալ յետոյ ինչ պիտի ըլլայ եղերին վրայ յետագայ թերթերով կը խօսիմք՝ հանդերձ խօսքի եւ գործքի հաշուետուար մըն ալ ներկայացնելով ընթերցողացս :

Շարունակելի :

## ԶՈՒՆԵՐՃԵԼԻՒԹՄԸ

Բարեկենդանի օրեր ըլլալուն ըստ աշխարհային սովորութեան՝ մարդիկ հարկաւ բանով մը զուարճանալ կուղեն . ուստի այս նպատակաւ մենք ալ մեր ընթերցողները այսպիսի օրեր զուարճացնելու համար մէկ երկու թերթերնուս մէջ քանի մը զուարճալիքներ՝ պարունակել հարկ տեսնեցինք : Եւ այն կերպիւ զուարճալիքներ որոնցմէ նաեւ նպատակաւ ազգի եւ հասարակութեան օգուտներ քաղուին :

Ուստի ահա այս անգամ « Երեւոյ գերեմ » նկարագրող « Գաւառ » օրիկայի « Կոչուած զուարճալիքը կը հրատարակուի, որ յաւէտ ընդօրինակութիւն մըն է քան շարադրութիւն :

Սակայն կարծեմք յամենայնի ներողամիտ պիտի լինին մեզի այն ազնիւ տիկնայք եւ օրիորդք, որոնք բնաւ չեն հեռելիր մեր յետագայ ցըցուցածներուն, եւ այս մասին իրենք ալ մեզի հետ համամիտ եղած՝ իրաւունք կուտան մեր

զըռցածներուն • իսկ անոնք որ կը հետևին և պիտի հետևին՝ անոնցմէ ալ կը խնդրեմք որ առանց դժկամակեւոյ, և առանց խռովելու համբերութեամբ ուշադրութիւն ընեն նախ մեր ցըրցածներուն, ու յետոյ հետեւած դործերնուն, և այնպէս խոհեմամտութեամբ որոշեն այսուհետեւ ընելիքներն . . . .

Մեզի ըսել, գրել, հրատարակել, } պարտ է  
Ձեզի լսել, խորհել, զմտաւ ածել

## ԻՐԵՆՔ ԶԻՐԵՆՔ ՆԱԼԵՐՈՂ

ԿԱՍ

ԳՈՒՆԱԽՈՐՈՂ ՏԻԿՆԱՅՔ

Արդէն բնութեամբ խորամանկ ըլլալով ազնիւ Տիկնայք, յօդուածիս գրուիւր դրուած բառերը կարդալով հասկցաք թէ ինչ ըսել կուզեմ։ Այլ գովեմ ձեր աշխոյժ միաբք, և կը խնդրեմ չի նեղանաք թէ փոխադարձաբար ես ալ զձեզ նը կարագրելու ձեռք կը զարնեմ։ մանաւանդ թէ առանց խռովելու ձեր նահապետական հանգրտութիւնը՝ միաքս զուարճացնել է զձեզ, պատմելով հոս ձեր Արոպացի վարպետութիւններուն գրուիւր հանդիպած փորձանքը, որ կարդացի Պերլինի օրագրի մը մէջ, որուն կը թողում ու ճոյն և պատմութեան պատասխանատուութիւնը։ Ահաւասիկ կարդացածս։

«Այս օրերս երեւելի Ն . . . բնալոյծը զանազան և հարկաւոր փորձեր ըրաւ սրահի մը մէջ՝ բազմաթիւ հանդիսատեսաց առջև, որոնց մէջ կը գտնուէին նաև շատ մը զարդարուած տիկնայք ալ։

«Սրահէն դուրս ելնելու ժամանակ՝ երիտասարդին մէկը դարձաւ յամուսնոյն, որ թեւը մտեր էր — սիրելի, (ըսաւ) կաղաչեմ երեսդ սրբէ, զի խոշոր կապոյտ բիծ մը ունիս այտիդ վըրայ — Խեղճ կինը շփոթեցաւ ու ճամբան մեծ հայելոյ մը հանդիպելով, նայեցաւ ու յանկարծակիի եկաւ, տեսնելով որ երեսը քսած կարմիր կապուտի փոխուեր է՝ քիմիքական փորձերուն և կապերուն աղդեցութեանը տակ Ն . . . բնալոյծին սրահին մէջ։ Ամացուկ մը երեսը օրրելով գոհ հղեւ, բայց սրտին մէջէն կը խընդար թէ՛ ինքնալ ուրիշներէն վրէժը պիտի առնու, և իրաւցնէ ուրիշ կնիկներ ալ դուրս կեւլէին նոյն միջոցին, Արիտասարդ Պարոնը և իրեն կինը խնդալէն ճաթեցան, տեսնելով այն

ինչոքի աշխարհ, որ անդգամ շոգիներուն և կաղերուն պատճառաւ կապոյտ, սև ու մանիշա կազոյնի փոխուեր էին։ Մանաւանդ ոմանք որ միայն երեսնին նկարելով գոհ չէին ըլլար, այլ փղոսկրեայ լանջ, վարդէ այտեր, կեռասնէ շըրթունք, և ապանոսէ յօնք ու թարթ կ'ուզէին ունենալ, այնպէս փոխուեր՝ որ մէյմէկ այլանշահ հրէշ դարձեր էին . . . .»

Բարեբաղդաբար մեր երկրին մէջ այնպիսի քիմիքական փորձեր ընող չի գտնուիր։ ( և թէ գտնուի ալ՝ ընտանեկան հոգեբը ձեզի երթալու թոյլ չեն տար) որ այն անդգամ կապերը մասնէին զձեզ։ Բարեբաղդաբար կ'ըսեմ, վասն զի Արոպայի մէջ ամեն մարդ քիչ շատ կրթեալ ըլլալով (ընդհանուր կարծիքին նայելով) այս տեսակ դիպուած մը որ պատահելու ըլլայ՝ իրենք իրենց մէջ խնդալով գոհ կ'ըլլան։ Բայց մեր երկրին մէջ ուր կրթութիւնը պակաս է, (չի վշտանաք ազնիւ Տիկնայք, ռամիկներուն համար է խօսքս) և կնիկները յարգել ու անոնց ներելը չեն գիտեր, դուք ըսէք՝ ի՞նչ կ'ընէին տեսնելով այն խայտառակ դեմքերը, եթէ ոչ եռահայկ' առնէին . . . .

Ըստ ինքեան այս գէշ սովորութիւնը մեր Ազգին վըրայ պակաս տեսնուելու էր, որովհետեւ և կարծես թէ՛ մեր երկրին արեւ աւելի զգալուն, օգը աւելի մեղմ, հողը աւելի առողջ ըլլալով՝ դուք արդէն դեղեցիկ ձիքքերով զարդարուած էք ընդհանրապէս, յարգելի տիկնայք։ Բայց այն է դժբաղդը որ գեղեցկութիւնը անփոփոխ և յաւիտենական չէ, ու երբոր կին մը կ'սկըսի իր գեղեցկութեան ծաղիկը կորսնցնենէ արհեստի կը դիմէ, արհեստէն կը մուրայ երիտասարդութիւնը, ձգեղ և դոյն, զոր բնութիւնն ալ իրեն կը մերժէ։ Ինչպէս երբոր տուն մը կը հիննայ, կ'ապականի, վըրայի զարդերը կաւրուին։ սակայն նոր գոյն մը տալով առջի պայծառութեանը կը հասնի։ Դուք շատ ցաւալի էք տիկնայք, որովհետեւ տուն մը դռնէ երկու երեք տարին անգամ մը կը ներկուի, բայց ձեր անխոնջ աշխատութիւնը ամեն առաւօտ նորէն կ'սկըսի, և մինչդեռ կը ջանաք ամեն օր աւելի երիտասարդ երևնալ ապականիչ, եղծիչ նիւթեր գործածելով՝ ժամանակէն առաջ պառաւուրութիւնը կ'աճապարէք, և կնիկները կը շարունակաւ կատնեն ինքնալ վըրայ . . . .

Իսկ ի՞նչ ըսեմ թարմ աղջկանց, որ կամ հետաքրքրութեամբ, ( և կամ փառասիրութեամբ



կը ցանկայի միշտ՝ որ կինս կամ դուստրս վերջընէր այն կեղծ ու դիւազոյն դիմակը երեսէն, որ կարենայի տեսնել այն ճշմարիտ դէմքը՝ որն որ Տէրն ու Արարիչը կատարեալապէս ստեղծեց է.

Արհեստը կրնայ օգնել բնութեան, և այս ճշմարիտ սկզբունք մըն է, բայց պէտք է որ միշտ բնութիւնը տիրէ արհեստին վրայ, և ոչ թէ անկէ ծածկուած ու խղիւղած մնայ. Ուստի յարգելի տիկնայք, երբ որ ձեր դէմքերը աղւորցընելու համար արտաքոյ բնութեան այս կերպ արհեստական ծածկաներու կը դիմէք, յայտնի գիտնաք որ ձերին բուն բնական գեղեցկութիւնը կը կորսնցունէք. և անով ձեր անեղծանելի բնութիւնը քանի մը խտտեալու և այլ ուրիշ նիւթերու գոյութենէ առաջ եկած՝ արհեստական իւղերու, փոշիներու ու ներկերու տակ կը խափանուին ու կ'եղծանին:

Ներեցէք ազնիւ տիկնայք, այս մասին ես զձեզ պատկերահանական աչքով դիտելով մէկ անգիւղայ ու փայտէ շինուած աստիճաններ կը նմանցընեմ. Արոնք արհեստի զօրութեամբ մարդու կերպարանք ստացած՝ և աղւորնալու համար ալ կերպ կերպ գոյներով ներկուած են . . . :

Հին աւուրց աստիճանները, և նորերուկ աստիճանները մէկդի առնելով՝ կ'ըսուի թէ չափազանց կարմիր կը գործածեն աւելի անոնց մէջէն, որոնք որ երեսնին կազով կը գոցեն. Այս կը գործածեն այն գոց երեսներէն ոմանք, ես անոնց իրաւունքը կուտամ. որովհետեւ կազը ծածկելով՝ դէմքը լուսաւոր գոյն մը կուտայ այտերուն՝ նըւաղեցընելով կարմրին սաստկութիւնը, և այն թանձր ու լայն յօնքերը՝ որոնց վրայ ժամերով քրտնք թափած են՝ կազին տակէն թիւթիչ ձեւ մը կառնուն, և մազերուն զանգունները կարգ կարգ գլխունուն երկու կողմը շարուած և ախանակիւ քարերով զարդարուած որ տեսնողներուն աչքը կը շլացնեն. Մարգարտէ մանեակ մը ճիտէն, և կամ շատ անգամ՝ խաչ մը կիսաբաց կուրծքէն կախուած՝ կը շրջին փողոցները զարմացումն ի ծերոց և գայթակղութիւն յերիտասարդաց:

Այս Տիկնայք ձեր այս դէպ ի ցանկութեան շարժառիթ եղող կերպարանքը տեսնող ո՞ր ծերը առանց հետաքրքիր հայեցումա՞ք մը ձգելու. և ո՞ր երիտասարդը առանց ցանկութիւն մը զգալու անցնէր . . . :

(Այս տեղ հեղնութեամբ մը ըսելով) արդեօք ո՞ր ամաւարիշտը, ո՞ր անաստուածը, չի

խոնարհիր այն կիսաբաց կուրծքերնուդ վրայ կախուած խաչը ջերմեռանդաբար համբուրելու. և կամ ո՞ր քրիստոնէն, ո՞ր առաքինին նաեւ երկրպագութիւն չընէր՝ ոչ կախուած խաչին, այլ այն արտաքոյ կարգի երեւոյթներուն. ուր ապրտամբ միտքը կը մոլորի:

Ի՞նչ ո՞ւր է լուսաւորութիւն մտաց . . . և ո՞ւր յառաջադիմութիւն խելաց . . . :

Բարեկամաբար կրտսմ ձեզի, չափազանց վախճանաբար համար միայն մեղուաջան խաթաններ, Տուտուններ, Հանրմներ, Քօթանէր, ալ բաւական է, քիչ մը կեցէք, հոգնութիւն առէք. թեւերնիդ ալ հոգնեցաւ, սրտերնիդ ալ մաշեցաւ . . . ալ պահ մը սա անտանելի աշխատութիւններնեդ դադրեցէք, և անգամ մը գլուխնիդ վեր վերցուցած սուր աչքով մը չորս կողմերնիդ դիտեցէք ու նայեցէք թէ՛ քանի՞ քանի անմեղ երիտասարդներ կը մոլորցնէք ձերին այդ շինծու բայց յափշտակիչ դիմաւոր քանի՞ քանի՞ զտաւմեալ ծերերու ալ մեռած ցանկութիւնը վերջ տին կենդանանալուն ու ժ կուտաք. քանի՞ քանի՞ սուրբերու խաչը ըլլալուն պատճառ . . . և վերջապէս քանի՞ քանի՞ միամիտ տղայոց գլխէ ելլելուն, և անոնց (ի մասին ցանկութեան) դեռ անդգայ բնութիւննին ժամանակէն առաջ արթննալուն առիթ մը կը լըլըք. յաւա քանի՞ քանի՞ Հոգե . . . բայց ասոնց համար ըսելքնիս թող այս կէտերուն մէջ թաղուի. զի եթէ յայտնեմք՝ ո՞չ խիստ ձախորդ է բաներնիդ ո՞ այս ճամբուն ծառայող Տիկնաներ . . . :

Մնացեալը հետեւեալ թերթով:

## Ա Ռ Ո Ղ Զ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Գ Լ ՈՒԽ Ի.

ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Հօլըր հաւաքեց շատ մը երկայնակեցութեան օրինակներ որ ներկայ ժամանակիս մէջ գիտելի են Աւրոպայի. ասոնց մէջ հազարէն աւելի կան որ 100 և 110 տարի ապրած են. վաթսուն 110էն 120. քսան և ինը 120էն 130. տասն և հինգ 130 էն 140. վեց 140 էն 150. և մէկ հատ 169 տարի. 1830 ին Ռուսիոյ յիշատակարանը երկու հարիւր և յիսուն անհատներու ցանկ մը կուտայ որոնք ապրած էին 100 էն մինչև 160 տարի. Անգլիոյ և Ալաբի մէջ 1830 ին նախըն

Թաց տան և ութը տարիներուն մէջ եօթը հարիւրէն աւելի անձինք թաղուեցան, որոնց կենաց տարիները 100 էն աւելի էին Պէյբրի «Բըրիտանիոյ անէծք» անուն աշխատութիւնը հարիւր անհատից ցանկ մը կը ներկայացընէ որոնց կենաց տարիները 95 էն մինչև 370 էն, որոնցմէ քսան և մէկը 150 տարիէն աւելի ապրած են, և երեսունը 120 տարիէն աւելի: Բլենի օրինակեց՝ Սէպէսիանի Ժամանակի յիշատակաբանէն հարիւր քսան և չորս անհատից անուանց ցանկը Փօի և Եբէնիէսի մէջ ապրող որոնք 100 էն մինչև 140 տարիներ ապրած էին, նոյն միջոցին Բարմայի մէջ հինգ անձինք կային՝ որոնց տարիքը 120 էն մինչև 130 է կը հասնէր, Բաքէնտայի մէջ մէկը 130: Փաքէնթիայի մէջ կին մը 132, և Սիլակատիայի մէջ տասը մարդ որոնցմէ վեցը 110, և չորսը 120 տարու էին: Հերօտիթս կը տեղեկացընէ մեզի որ Մաքրօպիաններուն կենաց տարիներուն սահմանը 120 էր: Արմապեան ցեղերը Մասը Սքէնաը Զանապարհօրդին խօսքին նայելով խիստ շատ կապրին:

Երգի յիշատակարանները անթիւ անհատներու օրինակներ կուտան Միացեալ Նահանգաց, Եւրոպերկիաի, Շուէտի, Տանիմարքայի, Սկոտիայի, Իրլանտայի, Բոլանտիայի, Յունաստանի, և Հնդկաստանի Արամական ցեղերու մէջէն՝ որոնք 100 տարիներ ապրած են: Պաղդիան, Սպանիան, և Գերմանիան քիչ օրինակ կուտան: Եւր Եօրի Նահանգին երկայն կողմին շատ մասերուն մէջ շահաւոր է այս մասիս բաղդատմամբ երկրիս որ և է մասին, նկատմամբ բնակչաց երկայնակեցութեան, և թուոյ որ 100 տարիներու կը հասնին, Եմերիկայի Հնդկինքը Ջերմակ մարդ չի տեսած և «կրակ ջուր» դեռ չի ճաշակած 100 էն աւելի կապրէին:

Հետեւեալը ցուցակ մըն է անհատներու անուանց և տարիներու՝ զոր Պաքըր Հօրսէլ և ուրիշները հաւաքած են, ասոնց մէջ միայն մէկ քանի անձինքներու վրայ քիչ մը տարբերութիւն կայ մէջերին, բայց անանկ տարբերութիւն մը որ հազիւ բանի մը տեղ կրնայ անցնիլ: Սիլամ Տըբ ապրեցաւ 95 տարի, իւր հայրը 102, իւր պապը 108, Միշէլ Սիլիան 100, Նոն Արէսէյ 100, Լուիս Բօրնարօ 100, Եմիլիայ Հ. Ռօլլէնտըն 100, Նէն Միլնը 102, Լիլնը Եյի 103, Ելնը Բրիչարտ 103, իր քոյրերը 104 և 108. Սիլամ Փիլիմէն 103. Սիլ

լամ Մարմօն 103. Սիսէրօի կինը 103. Սթէնտըր 103. Սիւզն Լամօնտ 104. Ս. Յովհանէս լուսկեաց 104. Յակոբոս Ճոնաւոր 104, Հիփօրատէս 104. Պար Տէքաբէլիան 104. Տիկին Հնտօն 105. Հայն Արէյ 105. Տիկին Ելէքսանտը 105. և Թէոդոս 105. Մաղարէլա 105. Նոն Բիքլամ 105. Ս. Ենտօն 105. Մարեամ Կալի 106. Թովմաս Տավիթ 106. իր կինը 105. Են Բարբը 108. Կօրճիս 108. Սիմօն Սթիլիթս 109, Բուպա Լորտ 109, Տիմօքաթէս 109, Տը Լօնկուիլ 110, Ենդ Սէնիշ 111, Են Ռուլ 111, Լու Շէյա 112. Միթլէթ 112, Ն. Ռաքը 112. Ռ. Բօրը 112. Ռ. Բօռմէն 112, Ե. Մ. Կրօզ 112, Պօղոս Ճոնաւոր 113. Ֆ. Լուբաթսոյլ 113. Մ. Մահօն 114. Նոն Ռէքս 114. Ռ. Կէն 115. Ս. Էբիֆամիս 115. Գէորգ Հարթըն 114. Լուիզ Հօլմ 118. Պամպերկ 120. Երսէն 120. Ռօմալուս 120. Նոն Պէլիս 122. Մարկարէթ Տարլէյ 130. Ֆրանսիդ Բէթ 130. Սիլամ Էլլի 130. Պամպերկ 130. Պետրոս Կորան 132. Նոն Կարան 132. Բիչարտ Լոյտ 132. Նոն Թէլը 133. Կատարինէ Լորէզ 134. Մարկարիտ Ֆօրսթըր 136. Նոն Մօնթ 136. Մարկարիտ Բալթն 137. Ժան Մարօյիօթա 138. Բեթկա Բերրի 140. Կալէն 140. Տումիթը Ռատալոյ 140. Լօրէնցիօ 140. Տեմմանի Կոմսը 140. Պարոն Էքէսթըն 141. Սօլմէլ Նիպէլ 143. Սիլամ Լիլան 145. Յովսէփ Պամ 146. Բոյնէլ Թովմաս Ռենսո 146, Լիլուարք Բէն 150. Յուդիդ Արօթօրտ 150. Կատարինէ Հէթ 150. Թովմաս Կարիք 151. Ֆրանսիս Բօնսիս 152. Յակոբոս Պօէլս 152. Թովմաս Բար 152. Թովմաս Տամմա 154. Եպիմէնիդէս 157. Ռօպերթ Լինչ 160, Լէթիթիա Բօքս 160. Նոն Հէթ 162. Սարա Բոլլէն 164. Սիլամ Եդուարդ 168. Հէնրի Նէնքինս 169. Նոն Բոլլէն 172. Պետրոս Բօրթն 185. Մօնկէթ 185. Բեթրազ Հարթն 185, Թովմաս Բամ 207. Եուլէս տը Բունեա 370.

Օհո՛ որ Ստիկեան աղանդը հիմնեց 100 տարի ապրեցաւ. Թիթիան ներկարարը դրեթէ 100. Ֆրանսիդ Սքարտիս Հօնիօ մեռաւ 1702 114 տարեկան. 1757 ին մեռաւ Բօրնուէլ մէջ Ժ. Էֆինկամ 144 տարեկան. Մարսիլիայի Ելէքսանտը Մէքիթօշ ապրեցաւ 112 տարի. Նալարիայի մէջ Յակոբոս Հափոդը 118 տարի. Ենդղիդ Բրիսթն քաղաքին մէջ Սալէնթին

Քաթէպին 118 տարի • Իռլանտիայի Ուէք-  
ֆորտ քաղաքին մէջ Հէնրի Սրտալէնը 113 տա-  
րի • Ալիքսիսիոսի մէջ Նոն Տը Լա Սուէթ-  
103 տարի • Լիլգապէթ Մաքֆէրան Սիովտի  
Քէյթնէս քաղաքին մէջ 117 տարի • Իռլանտիայի  
մէջ Օվէն Քարօլէն 127 տարի • Ենդղիայի  
Են Տէյ անուն չինկեանէն 108 տարի • Լ Սէ-  
վել մէջ Սալիսի Սարդինալը 110 տարի •

## Գ Լ Ո Ւ Ն Գ

Բ Ն Ա Կ Ա Ն Մ Ա Հ

Են հիւանդութիւնները որ ուժգին կամ  
յանկարծական մահ կը պատճառեն՝ բոլոր մարդ-  
կային սեռը կը կործանեն, միայն քանի մը  
բացառութեամբ • Հաւանական է որ հազարէն  
մէկը բնական մահուամբ չի մեռնիր, մինչև ան-  
գամ անոնք ալ մէկ տեղ առնելով՝ որոնց անուննե-  
րը յիշեցինք նախընթաց գլխուն մէջ իբր տարօրի-  
նակ երկայնակեցութեան օրինակներ, անոնց շա-  
տերը տակաւին հիւանդութեամբ մեռան, թույլ-  
մաս Բար երբ 132 տարեկան էր արեան առա-  
տութեամբ մեռաւ արքունեաց մէջ ապրելուն  
պատճառաւ • Տիկին Հետըն պաղ առնելով մեռաւ,  
Ուիլարտ Լոյս կատարեալ առողջ և զօրաւոր էր  
երբ 132 տարեկան էր, բայց միս ուտելու և  
ոգելից ըմպելիք խմելու մի անգամ ստիպուելով,  
որոնց ինք չէր սովորած, անմիջապէս հիւանդա-  
ցաւ և մեռաւ •

Բնական մահը կը յառաջանայ կազմութեան  
մէկ աստիճանաբար միախցութենէն, չափահա-  
սութեան ժամանակի հետ բաղդատելով ման-  
կութեան ժամանակ մարմինին հեղուկ մասը  
թանձր մասէն խիստ շատ է, բայց այս համեմա-  
տութիւնը յաճախաբար փոփոխուելու վրայ է •  
պատանեկութեան հեղուկութիւնը, դիւրաթե-  
քութիւնը և առաձգականութիւնը, քանի  
կազմութեան կարծրանայ և խտանայ սնդութիւն  
կարծրութիւն և ծերութեան անշարժութիւն  
յառաջ կուգայ • Բայց և այնպէս այս փոփոխու-  
թիւնը ոչ կարեւորաբար կ'արբանեկի թուլու-  
թեամբ կամ զառամութեամբ, եթէ կեանքը կե-  
նաց օրէնքներուն հետ գրեթէ կերպարանակ-  
ցութեան մէջ լինէր, սակայն կենսական ուժգը-  
նութիւնը այնպիսի զօրութեամբ կը տարածուի  
ջղային կազմութեան վրայ ամման և արձակման  
միջոցին որ՝ մարմնոյ հասունութենէն վերջը մե-  
ծապէս կը համահաւաքուին իմացականութեան

սահմանին մէջ, ան ատենը թէև գործունէութիւնը, աշխուժութիւնը և շարժումը կը պակ-  
սին, բայց հանդարտութիւնը, խոհականութիւ-  
նը և մտածականութիւնը կ'աճի •

Սերեայ թէ բարոյական և մտաւորական  
բնութիւնը իրենց կատարեալ հասունութեան  
չեն հասնիր, մինչեւ որ գործնական զիջումը  
սիրտի կազմական կենաց կենդանական գործառ-  
նութեանց մէջ • Իբր ամենանախնական նշանք  
ծերութեան սովորած եմք նկատել ատամանց  
անկումը, և արտաքին զգացողութեան կենդա-  
նական գործառնութեանց անհամեմատ եղծու-  
մը, ընդհանրապէս տեսութեան և լսողութեան  
բայց ասանկ չէ կենաց բնական անկումը՝ մէկ  
կատարեալ գործարանական կազմութեան մը մէջ •  
ամեն կենսական գործառնութիւնները, զօրու-  
թիւնները, և իմացականութիւնը կիսան նոյն  
եղանակ առնչութեամբ որով որ հասունութեան  
հասած էին • Քանի որ խտութեան յառաջա-  
դիմութիւնը հաւասարաբար կը յառաջանայ, և  
կազմական սահմանին մէջ շարժող զօրութիւն  
ները մեղմաբար կը թմրին, անդական գործառ-  
նութիւնները կը տկարանան, իմացականութիւ-  
նը կը բթանայ, արտաքին զգացողութիւնները  
կը նուաղին, և վերջապէս մտաւորական ծա-  
նօթութիւնները կ'անյայտանան . . . և կը  
տիրէ մահը առանց տագնապի և հեծկտութի-  
ւան բնական Մահ •

Շարունակելի:

## ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Թրիսթէն Պուրկէս, «Նստակ արծիւ», կը կոչուէր  
ժողովքներու մէջ արծուունին լինելուն կամ արծուէ  
կտուց քիթ ունենալուն, վերի շուրթին մէջ տե-  
ղը, վարի շուրթին հատուածին մէջ տեղը լինալուն  
և արծուի աչք և արտեւանունք ունենալուն հա-  
մար, եւ յիրաւի իր յատկութիւնը արծուային էր իր  
ատենին ամենէն աւելի հենդարան, պատառող, մը-  
տօք խոյսցող մարդ մըն էր, բայց ի ճօն Ռանտօֆէն •  
Եւ ով որ երկայն, ճանկաձեւ, բազուէ — կտուց,  
կամ հասարակ քիթ ունի • Ըսյն ընթանալով, նիհար  
կերպարանքով, ճակտի, վարի եւ մէջ տեղի մասին  
մէջ ցցուածքով, խիստ կը կատողի եթէ բամբաստի  
կամ յարձակուի, այսպիսի անձինք բարձր բնաւ-  
րութիւն, ռիսակալութիւն, ներգործութիւն, հետա-  
մտութիւն կ'ունենան, եւ ամենէն աւելի կը բարձ-  
րանան •

Վաղրերը ընդհանրապէս նիհար, ջղային երկայն

կը լինին, աշուրներնուն վրայ լեցուն, բերանին մեծ, եւ խոտորնակ աչքեր ունին դուրսի կողմէն դէպ ՚ի ներսի կողմի անկիւններուն, եւ մարդկային սեռէ էակներ որ այսպիսի կազմուածքի յատկացեալ են, վայրենի, հարստահարող՝ քինախնդիր, վտանգաւոր ձեռնարկութեան դիմող, եւ բնաւ մարդասէր չեն, սոսկում են թշնամեաց, եւ որ եւ է տեղ անուանի:

Յլաչուններ — ընդհանրապէս գեր կ'ըլլան քառակուսի բերան ունին, որովհետեւ իրենց ժանիքները դուրս ցցուած եւ ձակտի ակոսանամիտութեամբ է. գլուխներն լայն է. անկողի՝ եթէ չի գրգռուի, իսկ եթէ գրգռուի՝ սոսկալի կերպիւ կը կատղի, ասոնք իրենց յարմար այր եւ կին ունին, որոնց միմուռը, բրտութիւնը, խիստ ձայները, լեցուն ընաւորութիւնը, ծանր բաց ուժգին շարժումները, քառակուսի եւ ընդ, վար դարձած՝ բերնի անկիւնները, եւ ընդհանուր կերպարանական տեսիլը կը յայտնէ իրենց երկրորդ արեանարու աղգականութիւնը այս մուր-ռացող խածնող ցեղին հետ, որոյ օրինակ մին է Նօր-պըրկի կենդանեաց տան ծեր փափկասունը: Խոզ — գեր, դանդաղ, ծոյ, բարի բնաւորութեամբ, տափակ եւ խոռոչաքիթով է, իրենց արեանատուները մեծ փոր, տղմաքիթ, կրկին կղակ, շատաբան, տղամասէր, դարձուր եւ գինի սիրող, բարի զգացում ունեցող, մարդահաճոյ, դիւրին գործ սիրող, եւ գծուար աշխատութիւն ատող են: Զիւր, Եղեր, Ոչ-խարներ, Բուեր, Աղանկներ, Իծեր. եւ մինչեւ անգամ Գորտեր եւայն՝ նաեւ իրենց արու եւ էգ արեան առուններ ունին, իրենց յատկութեամբ:

Այս նմանութիւնները նկատելէն աւելի ստորագրելը դժուար է, բայց նկատման ամենալաւ կէտերն են, բերան, քիթ, կղակ, եւ ձայն:

Ե. Գեղեցիկ, անպաճոյճ, եւ ուրիշ ձեւեր: Աս ընդհանուր օրէնքին նկատմամբ՝ թէ ձեւը իբր յատկութիւն կառուի, լաւ համեմատեալ անձինք կերպարանաց վայելչութիւն եւ աղէկ կշռուած միտք ունին, քանի որ անոնք՝ որոնց կերպարանքը անհամեմատ է, այլանդակ եւ դէշ յատկութիւններ ունին, ասոր պէս անպաճոյճը ներքինին համեմատարտաքին յարմարութիւն ունի՝ քանի որ հաւասարակշիռ կշռուած եւ վայելուչ ձեւով այր կամ կին աղէկ կշռուած, եւ ընդունակ մտաւորականութիւններ ունին. արդ կանայք որ արականներէ աւելի գեղեցիկ են, աւելի ազնիւ զգացմունք, եւ յատկութեան աւելի մեծ կատարելութիւն ունին, բայց տկար են, եւ կին մը որքան աւելի գեղեցիկ լինի նոյնքան առաւել կը լինի իր վայելչութիւնը եւ կատարեալ իր մտաւորականութիւնը:

Յիւրաւ գեղեցիկ կնիկներէն ոմանք շատ անգամ ամենամեծ տրտունջ կը յարուցանեն, ճիշդ ամենաքաղցր ըմպելու նման երբ թթութիւն, համեմատաբար

թթութեամբ կը լինին. ամենազնիւ բաները երբ խանդարուին ամենէն գէշը կը լինին, այս երկու եղբրը ամենագէշ բնաւորութիւններն են. անոնք որ բնականաբար գեղեցիկ եւ փափկամորթ են՝ եւ վայելուչ կազմութիւն ունին, եթէ խանդարուին՝ համեմատաբար գէշ կը լինին, եւ անոնք որ ազեղ կերպարանք ունին՝ բնութեամբ ալ ազեղ են:

Այսպէս միջին կերպարան ունեցող անձինք շատ անգամ ընտիր որպիսութիւն ունին, բարեսիրտ, տաղանդաւոր, եւ այլն, որովհետեւ անոնք մէկ քանի զօրաւոր գիծեր եւ նաեւ կերպարան ունին, ճիշդ նոյն բանը որ մենք կը բացատրեմք, այսինքն անոնք թէ դիմաց եւ թէ յատկութեանց սահմաններ ունին: Այսպէս է որ ամեն յատկութեան փոխառութիւնը իր համաձայնութիւնը ունի՝ թէ գործարանական կազմութեան եւ թէ կերպարանական ձեւին մէջ, այս իրողութիւնը կատարելապէս լուսաբանելու համար պարտիճք ուրիշ օրէնք մը բացատրել որ է,

Շարունակելի:

## ՆՈՐԱՏԻՊ ՀՐԵՏԱՐԵԿՈՒԹԻՒՆ ՄԵ

“ՏԱԽՏԱԿԻ ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՐԵՐԱՅ”

Այս վերագրով խիստ կարեւոր հրատարակութիւն մը ՚ի լոյս ելաւ այս օրերս, երկասիրութեամբ Մէծմուսը Հապատիսի Մեծայարդ խմբագրոյն: Ինչպէս կերել այս հրատարակութիւնը՝ նպատակը Հայ հրատարակութեան ամեն հատակի եւ ամեն աստիճանի անձանց՝ թըւարանութեան շահաւետ ուսմունքը պարզ եւ ամենադիւրին կերպիւ քիչ ատենի մէջ կատարելապէս ուսուցանել է: Ուստի կարծեմք հարկ չի պիտի ըլլայ մեր կողմէն այս նորահար գործոյն օգտակարութեան եւ նորին հեղինակին աշխատութեանը վրայ երկարաբանել, քանի որ անոր ամեն մէկ տախտակներուն վրայ առանձին առանձին կը փայլէ իւր պիտուականութիւնն ու ուսուցանական երկասիրին ըրած ջանքն ու հոգեբը:

Ի. թ. Թուարանական Տախտակները որ ամբողջ 24 հատ պիտի ըլլայ, բայց այժմ 12 հատ միայն հրատարակուելով, կը յուսացուի թէ քիչ օրէն մնացեալ 12 հատն ալ ՚ի լոյս կ'ընծայուի:

Ուղղորդ կրնայ գնել Մեծ նոր խանր Մեծ մուսը Հապատիսի սենեակը, ամեն մէկ տախտակին 30 փարայ վճարելով:

Գալ անգամ այս կարեւոր հրատարակութիւն վրայօք մեր ընթերցողացը աւելի տեղեկութիւն մը տալու համար՝ Մեծայարդ հեղինակին այս մասին իւր կողմէն ըրած Յայտարարք պիտի հրատարակեմք, մէկ քանի խօսք մ'ալ մեր կողմէն յաւելցնելով:

Խմբագիր—Տնօրէն  
Մ. Գ. ՏԵՅԻՐՄԷՆՅԱՆ

ՏՊԱՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՐԻՔՅԱՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՊՈԼԻՍ, ՖԻՆԱՆՑԻԱԼ